ԵՐԵՎԱՆԻ
ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԻ
ԱՆՎԱՆ Հ. 171 ՀԻՄՆԱԿԱՆ
ԴՊՐՈՑ

«ԱՍՍՈՒՆՔԻ ԹԱՏՐՈՆ»

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՄԲԱԿ

«ԱՍՄՈՒՆՔԻ ԹԱՏՐՈՆ»

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

/6-ից 9-րդ դասարաններ, շաբաթական 2 ժամ/

Արդի կրթական բարեփոխումների նպատակն է ուսումնական գործընթացը դարձնել մրցունակ, ժամանակակից չափանիշներին համապատասխան: Ներկայումս ամբողջ աշխարհում ընթանում են վերափոխումներ, և հանրությունը կրթությանը նոր քաղաքացու ձևավորման պահանջ է առաջադրում:

Կրթության դերն աճում է, միաժամանակ բարեկեցության հասնելու ուղիների փնտրտուքը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով գեղեցիկը տեսնելու, գնահատելու, արժևորելու և ստեղծելու արժեքային որակներ: Այսպիսի որակների ձևավորմանն ու զարգացմանը մեծապես նպաստում են արվեստի բնագավառի խմբակները, առավել ևս թատրոնը, որը բոլոր արվեստների սինթեզն է համարվում:

Բազմաթիվ առաջատար հաստատություններում ուսումնական գործընթացին զուգահեռ հաջողությամբ կիրառվում է արվեստի միջոցով կրթելու և դաստիարակելու մեթոդը: Թատրոնը և մասնավորապես ասմունքը արդյունավետ միջոց է, որը նպաստում է երեխայի բանավոր խոսքի զարգացմանը, բեմական մշակույթի, էթիկայի կարևորագույն նորմերի, որակյալ հանդիսատես լինելու և այլ հմտությունների ձևավորմանը:

Ի՞ՆՉ Է ԱՍՄՈՒՆՔԻ ԹԱՏՐՈՆԸ

1.Արդի ժամանակներում ասմունքի ճյուղը զարգացել և դարձել է կատարողական արվեստի առանձին ճյուղ, բայց այն թատերական արվեստի անբաժանելի մաս է: Գեղարվեստական, գեղեցիկ խոսքի կարևորությունը առավել մեծ է երեխայի գեղագիտական ճաշակի ձևավորման գործում:

2.Ասմունքի թատրոնի հիմնական նպատակն է ասմունքի միջոցով ստեղծել թատերական ներկայացումներ, ինչպես նաև գրական-երաժտական ծրագրեր ու միջոցառումներ:

3.Այն երեխաներին գեղարվեստական կրթություն տալու և գեղագիտական ճաշակ ձևավորելու անհրաժեշտ նախապայմաններից է:

4.Այն նաև հաճելի ժամանց է և, իհարկե, օգնում է նաև զարգացնելու ճարտարախոսությունը, հնչերանգային գեղեցիկ խոսքը, ձևավորում է բարձրաճաշակ արժեքային համակարգ:

«ԱՍՄՈՒՆՔԻ ԹԱՏՐՈՆ» ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Թատրոնի անդամների կրթության որակի բաձրացումը, գեղարվեստական մտածողության, դերասանական արվեստի հմտությունների և անհատականության զարգացումը, հնչերանգային գեղեցիկ խոսքին և թատերական արվեստին տիրապետելը:

«ԱՍՄՈՒՆՔԻ ԹԱՏՐՈՆ» ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ

- «Ասմունքի թատրոն» թատերական խմբակը առաջին հերթին ապահովում է սովորողի գեղարվեստական կրթությունը, զարգացնում գեղագիտական ճաշակը և տալիս ճիշտ և մաքուր մշակութային կրթություն.
- Նպաստում է երեխայի կաշկանդվածության և բարդույթների վերացմանը, բառապաշարի, բանավոր խոսքի և գրավոր մտքի զարգացմանը. բեմական կարողությունների խորացմանն ու հմտացմանը.
- Օգնում է երեխային զարգացնել սեփական մտքերն արտահայտելու կարողությունը, խոսքի տեխնիկան և շփման մշակույթը. տալիս է համարձակություն և ինքնավստահություն, ճարտասանությանն ու հռետորական արվեստին տիրապետելու հմտություն.
- Գիտելիքը վերածվում է հմտության, ինչը նպաստում է, որ ստացված տեղեկատվությունը երկարատև պահպանվի երեխայի հիշողության մեջ, օգնի նրան կյանքի տարբեր իրադրություններում դրսևորել ճկուն գործելակերպ:

«ԱՍՄՈՒՆՔԻ ԹԱՏՐՈՆ» ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 1Նախաձեռնող, շնորհալի երեխաների բացահայտումն ու զարգացումը:
- Աշակերտների համագործակցությունը:
- Գործնական հմտությունների և կարողությունների զարգացում, որոնք կարող են կիրառվել առօրյայում:
- Հաղորդակցական ընդունակությունների զարգացում:
- Թատերական արվեստի տիրապետում:
- Դերասանական արվեստի հմտությունների ձեռքբերում:
- Սեփական բազմագիտականության /էրուդիցիա/ բարձրացում:

«ԱՍՄՈՒՆՔԻ ԹԱՏՐՈՆ» ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ

Թատերական խմբակում ընդգրկվում են հիմնական դպրոցի դասարանների աշակերտները՝ 6-ից 9-րդ դասարաններից՝ կամավորության սկզբունքով:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Թատերական ներկայացումների, գրական-երաժշտական միջոցառումների կազմակերպում և ացկացում 171 հիմնական դպրոցում.

2.Թատրոնի անդամների համատեղ հանգստի, միջոցառումների կազմակերպում.

3.Թատերական արվեստի սկզբունքներին համապատասխան կրթական և այլ միջոցառումների կազմակերպում:

«ԱՍՄՈՒՆՔԻ ԹԱՏՐՈՆ» ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳՐԵՐԸ

1. Թատրոնի սաների համար կազմակերպել գործնական սեմինարներ՝ հմտությունները զարգացնող մեթոդներով, խաղային հանձնարարություններով, բեմական խոսքի և դերասանի վարպետության վարժանքներով:

2.Անցկացնել ուսուցողական դասեր բեմական խոսքի և դերասանի վարպետության թեմաներով, դրանով իսկ, աշակերտներին ծանոթացնել թատերական արվեստի հմտություններին, բեմադրություններ անելու նրբություններին:

3.Իրականացնել համագործակցություն մայրաքաղաքի և հանրապետության հանրակրթական դպրոցների թատերական խմբակների հետ:

4.Թատրոնի սաների համատեղ հանգստի շրջանակներում կազմակերպել այցելություններ թատրոններ, թանգարաններ, գրադարաններ, մշակութային հաստատություններ:

5.Թատրոնի նոր մասնակիցների համար կազմակերպել ներկայացում-թրեյնինգներ՝ հագեցած գործնական վարժանքներով ու խաղերով:

6.Գործնական սեմինարների ժամանակ մշակել և կիրառել զանազան հանձնարարություններ, խաղեր, կատարողականությունը զարգացնող այլ հարակից մեթոդներ: Խաղ-վարժությունների միջոցով բացահայտել դերասանի վարպետության և բեմական խոսքի տեխնիկայի հմտությունները, թատերական արվեստի նրբությունները: Դասընթացների ընթացքում ներկայացնել նաև բեմական և հանդիսատեսի էթիկական նորմեր:

7.Կազմակերպել հնչերանգային արտասանության կատարելագործմանն ուղղված լսումներ:

8.Հյուրընկալել թատերական արվեստի ներկայացուցիչների, նրանց հետ կազմակերպել քննարկումներ և ուսուցողական թրեյնինգներ:

<u>«ԱՍՄՈՒՆՔԻ ԹԱՏՐՈՆ» ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԸ ԿՕԳՆԻ</u>

Ամենատարբեր ոլորտներում՝ բիզնեսում, գիտության և քաղաքականության մեջ աշխատող մարդիկ իրենց որոշումների ընդունման և հիմնավորման համար կիրառում են բազմաթիվ հմտություններ, որոնցից մեկը գեղարվեստական մտածողության կարողությունն է:

- ► տեսնել, գնահատել, ստեղծել և արժևորել գեղեցիկը,
- ► վերլուծաբար մտածել,
- ► դիտել երևույթները տարբեր տեսանկյուններից,
- ► տրամաբանորեն և գեղեցիկ կառուցել սեփական մտքերը,
- ► զարգացնել հաղորդակցական ընդունակությունները,
- ► բարձրացնել մասնագիտական մրցունակությունը,
- ► կյանքում հաջողակ լինել:

- Թատրոնը կօգնի մարդկանց վրա դրական ազդեցություն գործել. կսովորեցնի ձևակերպել ճիշտ հուզականությամբ և հնչերանգով գեղեցիկ խոսք՝ դիմացինի մոտ առաջացնելով համակրանք: Հնարավոր է, որ լավ գաղափարներ և մտքեր ունենաք, սակայն այս հմտությունների բացակայության դեպքում պարզապես չի հաջողվի դրանք գեղեցիկ, ճիշտ և համոզիչ արտահայտել:

- Թատերական խմբակում ընդգրկվելու մեկ ուրիշ առավելությունն այն է, որ երեխան դառնում է մեկ ընդհանուր նպատակի շուրջ համախմբված խմբի /թիմի/ անդամ՝ ակամայից զարգացնելով թիմային ոգին և նպաստելով խմբի /թիմի/ հաղթանակին:

«ԱՍՄՈՒՆՔԻ ԹԱՏՐՈՆ» ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ

- Բնութագրելով «Դերասանի վարպետություն» և «Բեմական խոսք» առարկաների ներկայացված ուսումնական թեմատիկ պլանները՝ նշենք, որ տեսական մասը ապահովում է բոլոր այն առաջնային և հիմնական գիտելիքները, որոնք անհրաժեշտ են թատերական խմբակ հաճախող յուրաքանչյուր սանի համար:
- Գործնական բաժինը, որը հիմնականում կառուցված է վարժանքներից և բեմական փորձերից, սովորողներին հնարավորություն կտա ավելի հեշտությամբ յուրացնել և տիրապետել դերասանական արվեստի և բեմական խոսքի գաղտնիքները:

«ԱՍՄՈՒՆՔԻ ԹԱՏՐՈՆ» ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ասմունքի թատրոն» թատերական խմբակի ծրագիրն ու բովանդակությունը ներառում է «Դերասանի վարպետություն» և «Բեմական խոսք» առարկաների տեսական և գործնական պարապմունքների հիմնական թեմաները

Դասացուցակով նախատեսված ժամերը՝ շաբաթական 2 ժամ, բաշխված են հետևյալ կերպ՝

- 34 ժամ «Բեմական խոսք» և «Դերասանի վարպետություն» առարկաներից տեսական դասեր /շաբաթական 1 ժամ/.
- 34 ժամ «Բեմական խոսք» և «Դերասանի վարպետություն» առարկաներից գործնական դասեր /շաբաթական 1 ժամ/.

	ԹԵՄԱ	ԴԱՍ	ԺԱՄ	ՇԱԲ.
1.	Թատրոնը կոլեկիվ արվեստ է Թատրոնը կոլեկիվ արվեստ է	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	1-ին
2.	Թատրոնը սինթետիկ արվեստ է Թատրոնը սինթետիկ արվեստ է	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	2-րդ
3.	Ցուցադրման և վերապրման արվեստ Ցուցադրման և վերապրման արվեստ	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	3-րդ
4.	Ֆիզիկականի և հոգեբանականի միասնությունը Ֆիզիկականի և հոգեբանականի միասնությունը	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	4-րդ
5.	Գեղարվեստական ճաշակ Գեղարվեստական ճաշակ	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	5-րդ
6.	Խոսակցական ապարատ Խոսակցական ապարատ /վարժանքներ/.	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	6-ին
7.	Շնչառություն Շնչառություն /վարժանքներ/.	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	7-րդ
8.	Տեմպ և ռիթմ Տեմպ և ռիթմ /վարժանքներ/.	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	8-րդ
9.	Հնչյուն և բառ Հնչյուն և բառ /վարժանքներ/.	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	9-րդ
10.	Խոսքի տեսակները և կառուցվածքը Խոսքի տեսակները և կառուցվածքը	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	10-րդ
11.	Ազատ, խոսակցական խոսք-խոսույթ-միտք Ազատ, խոսակցական խոսք-խոսույթ-միտք	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	11-րդ

12.	Գրական խոսք Գրական խոսք /վարժանքներ/.	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	12-րդ
13.	Հռետորական խոսք Հռետորական խոսք /վարժանքներ/.	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	13-րդ
14.	Գեղարվեստական խոսք Գեղարվեստական խոսք /վարժանքներ/.	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	14-րդ
15.	Բեմական ուշադրություն Բեմական ուշադրություն	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	15-րդ
16.	Կենտրոնացված ուշադրություն Կենտրոնացված ուշադրություն	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	16-րդ
17.	Բեմական երևակայություն Բեմական երևակայություն	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	17-րդ
18.	Բեմական ազատություն Բեմական ազատություն	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	18-րդ
19.	Բեմական չափավորություն Բեմական չափավորություն	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	19-րդ
20.	Կերպար բացահայտում, ստեղծում Կերպար բացահայտում. խտեղծում	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	20-րդ
21.	Կերպար ստեղծում Կերպար ստեղծում	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	21-րդ
22.	Հանպատրաստի խաղ Հանպատրաստի խաղ	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	22-րդ
23.	Ենթատեքստ Ենթատեքստ	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	23-րդ
24.	Տրամաբանական շեշտ և դադար Տրամաբանական շեշտ և դադար	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	24-րդ
25.	Գերխնդիր Գերխնդիր	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	25-րդ
26.	Էթիկա Էթիկա	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	26-րդ
27.	Տրամադրություն Տրամադրություն	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	27-րդ
28.	Գրողի հերոսը և քո հերոսը «բացահայտում» Գրողի հերոսը և քո հերոսը «բացահայտում»	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	28-րդ
29.	Չափածո և արձակ խոսք /կերպարային/ Չափածո և արձակ խոսք /կերպարային/	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	29-րդ
30.	Աշխատանքի կազմակերպում-ինչպես ընտրել թեմա Աշխատանքի կազմակերպում-ինչպես ընտրել թեմա	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	30-րդ
31.	Երբ է սկսվում և ավարտվում աշխատանքը Երբ է սկսվում և ավարտվում աշխատանքը	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	31-րդ
32.	Հանձնիր հանդիսատեսին Հանձնիր հանդիսատեսին	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	32-րդ
33.	Հանձնիր հանդիսատեսին Հանձնիր հանդիսատեսին	Տեսական Գործնական	1 ժամ 1 ժամ	33-րդ
34.	Ստուգարք Ներկայացման հանձնում	Տեսական Խաղ	1 ժամ 1 ժամ	34-րդ